
ԱԳՐՈՒՄԻ ԶՆԵՍԻ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ



Չայ գինեգործների վերապատրաստման և հմտությունների
զարգացման կարիքների գնահատում



Պատրաստված է Գերմանիայի միջազգային
համագործակցության ընկերության համար

giz

ԵՐԵՎԱՆ 2013

Երախտագիտություն

Անկեղծ շնորհակալություն Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերությանը, Երիտասարդ գինեգործների միավորում ՀԿ-ին և այն անհատներին ու կազմակերպություններին, որոնք նպաստել են այս հետազոտության իրականացմանը:

Բովանդակություն

Նպատակը	4
Մեթոդաբանությունը	4
ՀՀ գինեգործության ոլորտի համառոտ ակնարկ	6
Գինեգործական ընկերությունների ընդհանուր բնութագիրը	11
Գինեգործների մասնագիտական զարգացման կարիքները	16
Ապագա գինեգործ-տեխնոլոգներին անհրաժեշտ հմտությունները, որակները և փորձառությունը	25
Եզրակացություններ, առաջարկություններ	31
Օգտագործված գրականություն	33

Նպատակը

Սույն ուսումնասիրության հիմնական նպատակն էր բարելավել Հայաստանում գինեգործական ընկերությունների փորձի և կարիքների ընկալումը, ինչպես նաև բացահայտել գինեգործ-տեխնոլոգների վերապատրաստման ու տեխնիկական աջակցության կարիքները: Հետազոտությունը նաև նպատակ էր հետապնդում գինեգործական ընկերություններին ներգրավել գործող ուսումնական պլանների արդիականացման և բարեփոխման աշխատանքներում՝ բացահայտելով գինեգործության կրթական ծրագրերի հարցում գործող ընկերությունների ունեցած նախընտրությունները: Ուսումնասիրությունը բացահայտում է այն հմտությունները, կարողությունները և փորձառությունը, որ գինեգործարանները ակնկալում են տվյալ ընկերություններում ապագա գինեգործ-տեխնոլոգներ դառնալու ներուժ ունեցող նոր աշխատակիցներից:

Սույն ուսումնասիրության առաջին սևեռակետը գործող գինեգործ-տեխնոլոգների վերապատրաստման կարիքների բացահայտումն էր, հարդյունս որի նախատեսվում է մշակել և իրականացնել գինեգործության բնագավառի վերապատրաստման ծրագրեր՝ հայտնի համալսարանների մասնակցությամբ: Հաջորդ սևեռակետը խնդրման տեխնոլոգիաների և գինեգործության մասնագիտության ուսումնական պլանն էր: Տեխնոլոգիական կրթությունը պետք է լինի ժամանակին համընթաց և բավարարի գործատուների կարիքները: Ուստի, ոլորտի ընկերությունները պետք է ակտիվ մասնակցություն ունենան ուսումնական պլանների կազմման կամ բարեփոխման աշխատանքներում: Սույն ուսումնասիրության նպատակներից մեկն էլ հայաստանյան գինեգործարանների նախընտրությունները քանակական վերլուծության ենթարկելն էր՝ ապագա գինեգործ-տեխնոլոգների պատրաստմանն ուղղված կրթական ծրագրերի տեսակետից:

Մեթոդաբանությունը

Հետազոտության ընթացքում կատարվել են այցելություններ հայաստանյան բոլոր գործող գինեգործարաններ և իրականացվել են դեմառդեն հարցումներ տնօրենների և/կամ գինեգործ-տեխնոլոգների հետ:

Չնայած այն հանգամանքին, որ պաշտոնական վիճակագրության մեջ առկա են հակասություններ Հայաստանում գործող գինեգործական ընկերությունների իրական քանակի առումով¹, հետազոտության միջոցով պարզվեց, որ 2013թ. օգոստոսի դրությամբ Հայաստանում գործում է գինու արտադրությամբ զբաղվող 27 ընկերություն:

Ուսումնասիրության ընթացքում օգտագործվեց 2 հարցաթերթիկ՝ առաջինը գործող գինեգործների վերապատրաստման կարիքների, գինեգործարաններում առկա իրավիճակի և խնդիրների բացահայտման համար (WTNA), իսկ երկրորդը՝ ապագա գինեգործ-տեխնոլոգների հմտությունների, կարողությունների և անհրաժեշտ փորձառության բացահայտման համար՝ ուսումնական պլանների բարեփոխման կամ նոր կրթական ծրագրերի կազմման նպատակով (FWSA):

¹ ՀՀ պարենային անվտանգության ապահովման հայեցակարգում (հաստատված 18.05.2011թ.) նշված է, որ Հայաստանում գործում է խաղող վերամշակող 65 ընկերություն: ՀՀ գյուղատնտեսության նախարարության կայքում նշված է 45 գինեգործական ընկերություն, EV Քոնսալթինգ-ի հետազոտություններում՝ 20, իսկ ՀՀ ազգային վիճակագրական ծառայության հաշվետվություններում՝ 21 գինեգործական ընկերություն:

Երկրորդ հարցաթերթիկը տեղայնացվեց Լիցենզերգի և Շնայդերի կողմից նախորդ դարի 80-ականներին անցկացրած AGRIMASS (Ագրոբիզնեսի կառավարման ունակությունների և հմտությունների ուսումնասիրություն) հետազոտությունից և հարմարեցվեց հայաստանյան պայմաններին և գինեգործության ժամանակակից սկզբունքներին: Հարցման գործիքն, ընդհանուր առմամբ, նպատակաուղղված էր 83 պարամետրերի, որոնք խմբավորվեցին հետևյալ 7 կատեգորիաներում՝ 1. Գինու արտադրություն, 2. Խաղողագործություն, 3. Տեխնիկական հմտություններ, 4. Հաղորդակցական հմտություններ, 5. Անձնային հատկանիշներ, 6. Ջբաղվածություն և աշխատանքային փորձ, 7. Ընդհանուր փորձառություն բարձրագույն կրթության ոլորտում: 2-րդ հարցմանը մասնակցեց 36 մարդ՝ 21 տնօրեններ կամ սեփականատերեր և 15 գինեգործներ:


Մեթոդաբանությունը հիմնված էր այդ հմտությունների տեղակարգման (վարկանշման) վրա այն հաշվով, որ ուսպլանների մշակման ժամանակ դրանք հաշվի առնվեն ըստ կարևորության և ընդգրկվեն նոր կամ եղած առարկայական դասընթացներում:

Լայկերտի 5-կետանոց սխեմայի միջոցով ցույց է տրվել յուրաքանչյուր հատկանիշի հարաբերական կարևորությունը, ինչպես նաև յուրաքանչյուր կատեգորիայի վարկանիշը: Յուրաքանչյուր հմտության կամ հատկանիշի առումով տրված է միջին պատասխանը և ընդհանուր վարկանիշը (83-ից): Յուրաքանչյուր կատեգորիայի համար հաշվարկվել է «p» արժեքը (տեստերի միջոցով դիտված փաստացի նշանակալիության մակարդակ) և համեմատվել ընտրված նշանակալիության 0.05 մակարդակի հետ՝ օգտագործելով տվյալ կատեգորիայի շրջանակում յուրաքանչյուր հմտության առումով ստացված պատասխանի համեմատությունը միջին արժեքի հետ: Արդյունքների մեջ ներառվել են նաև յուրաքանչյուր պատասխանի տարբերությունը միջին արժեքից և յուրաքանչյուր հմտության ընդհանուր վարկանիշը:

ՀՀ գինեգործության ոլորտի համառոտ ակնարկ

Մինչև անկախացումը Հայաստանում կոնյակի և գինու արտադրությամբ զբաղվում էին 2 արդյունաբերական միավորումներ, 3 գինեգործական կոմբինատներ և 26 գինու գործարաններ²: ՀՀ ԱՎԾ տվյալներով, անկախությունից հետո, 7-8 տարիների ընթացքում գինու արտադրությունը երկրում նվազեց մոտ 30 անգամ, շամպայնինը՝ ավելի քան 3, իսկ կոնյակինը՝ 5 անգամ: 1990-ական թվականների վերջերին գինու արտադրությունը սկսեց վերականգնվել, սակայն դանդաղ տեմպերով: Վերջին 7 տարիների ընթացքում գինու արտադրությունը տատանվում է 3.8-5.8 մլն լիտրի սահմաններում և դեռևս չի հասել 2000-ականների ամենաբարձր մակարդակին՝ 2005թ.-ի 6.8 մլն լիտրին: Հարկ է նշել, որ 2008թ. գինու արտադրությունը հասել էր իր պատմական նվազագույնին՝ 3.3 մլն լիտր (տես գծանկար 1): 2007-2011թթ. նկատվեց արտադրության ծավալների աճ, որը պայմանավորված էր վերջին տարիներին ոլորտում կատարված թե ներքին, թե օտարերկրյա ներդրումների աճով: Վերջին մի քանի տարիների ընթացքում գինեգործության ոլորտում կատարվեցին խոշոր ներդրումներ՝ հատկապես առաջատար տեխնոլոգիաների ձեռք բերման և արտադրական գործընթացների արդիականացման ուղղությամբ: Սակայն 2012թ. կրկին որոշակի անկում արձանագրվեց արտադրության մեջ:

Ոլորտի վրա իր բացասական ազդեցությունն են թողնում նաև անբարենպաստ եղանակային պայմանները և բնական աղետները:




Աղբյուրը՝ ԱՎԾ

Խաղողի համախառն բերքի և խաղողի մթերումների ծավալների ավելացման պայմաններում 2012թ. գինու արտադրության անկում գրանցվեց (տես գծանկար 2): Գինու արտադրության քանակների այս տատանումները հիմնականում կապված են այն հանգամանքի հետ, որ գինու նկատմամբ ներքին

² - Ա. Հարությունյան – Խաղողագործությունը և գինեգործությունը Հայաստանում, 2007թ.


պահանջարկը շատ թույլ է, իսկ արտահանումն էլ, նույնիսկ վերջին տարիներին գրանցած աճի պարագայում, դեռևս կոնկրետ միտումներ կան կայուն շուկաներ չի ձևավորում: Հայաստանում գինու սպառման մշակույթ գրեթե չկա, եթե հաշվի առնենք այն հանգամանքը, որ Հայաստանում տարեկան սպառվում է մեկ շնչի հաշվով 1.4 լիտր գինի (Wine Institute - 2010): Վերջին տարիներին ակտիվացան խմիչքների սպառման կառուցվածքում նկատվում է գինու մասնաբաժնի աճ՝ 2005թ. 7.6%-ի փոխարեն 2010թ. ունենք 11% (Ի Վի Քոնսալթինգ, 2012): Հայ սպառողների մեծ մասը չունի խիստ պահանջներ գինու որակի նկատմամբ, ինչը լրացուցիչ խոչընդոտ է ոլորտի զարգացման համար: Գինեգործարանները նույնպես զգում են դա և ավելի հակված են արտադրելու կոնյակ, քան գինի: Բազմաթիվ գինեգործական ընկերություններ պնդում են, որ գինին շահութաբեր չէ կամ այդքան էլ շահութաբեր չէ և անցում են կատարում կոնյակի արտադրության:



Աղբյուրը՝ ԱՎԾ.

Վերջին տարիներին գինու արտահանումը արագ տեմպերով աճում է: Անցած 7 տարիների ընթացքում գինու արտահանումը աճում է տարեկան միջինը մոտ 34%-ով: Մրգային գինիների արտահանման աճի տեմպը մի փոքր ավելին է, քան խաղողի գինիներիինը՝ 35% (տես գծանկար 3): 2012թ., 2008թ. համեմատությամբ, բնեղեն արտահայտությամբ Հայաստանից արտահանվել է մոտ 2.5 անգամ ավելի շատ գինի, իսկ 2013թ. առաջին կիսամյակում աճի տեմպը մոտ կրկնապատկվել է (տես www.customs.am – ի տվյալները): 2012թ. բնեղեն արտահայտությամբ Հայաստանից արտահանվել է մոտ 1.2 մլն լիտր խաղողի գինի (62%-ով ավելի, քան 2011թ.) և մոտ 1 մլն լիտր մրգային գինի (15%-ի աճ 2011թ. համեմատությամբ):

Գինու արտահանման աշխարհագրությունը գրեթե չի փոխվել. գերիշխում են ավանդական արտահանման շուկաներ՝ ՌԴ-ն և ԱՊՀ երկրները: Արտահանման աշխարհագրությունը ընդլայնվելու միտում ունի դեպի Չինաստան և Աֆրիկայի երկրներ, սակայն այդ երկրներ հայկական գինիների արտահանումը ոչ պարբերական բնույթ է կրում՝ հիմնականում փոքր ծավալներով:



Աղբյուրը՝ www.customs.am


Աղյուսակից երևում է, որ արտահանված խաղողի գինու ավելի քան 80%-ը և մրգային գինիների մոտ 65%-ը արտահանվում է Ռուսաստանի Դաշնություն: 2012թ. խաղողի գինու արտահանման զգալի աճ է նկատվել դեպի Բելառուս, Գերմանիա, Լիտվա, Ղազախստան, Ուկրաինա, Չեխիա և զարմանալիորեն՝ նույնիսկ Վրաստան և Ֆրանսիա: Կարծում ենք, վերջիններիս դեպքում մեծ դեր ունի Սփյուռքի զործոնը: 2011թ. համեմատությամբ 2012թ. կրճատվել են հիմնականում մրգային գինու արտահանման ծավալները դեպի ԱՄՆ, Գերմանիա, Ուկրաինա և Չինաստան (տես աղյուսակ 1):

Աղյուսակ 1. Գինու արտահանումը ըստ երկրների

		2011	2012
Բելառուս			
	Խաղողի գինի	հազ.լ	11.7
Բուլղարիա			
	Խաղողի գինի	հազ.լ	2.6
Գերմանիա			
	Խաղողի գինի	հազ.լ	1.4
	Մրգային գինի	հազ.լ	80.2
Իտալիա			
	Խաղողի գինի	հազ.լ	1.1
Լեհաստան			
	Խաղողի գինի	հազ.լ	4.4
	Մրգային գինի	հազ.լ	3.5
Լիտվա			
	Խաղողի գինի	հազ.լ	17.4
	Մրգային գինի	հազ.լ	23.8
Կամերուն			

	Խաղողի գինի	հազ.լ	11	
Ղազախստան				
	Մրգային գինի	հազ.լ		10.7
ԱՄՆ				
	Խաղողի գինի	հազ.լ	55.7	46.8
	Մրգային գինի	հազ.լ	187.1	135.5
Ուկրաինա				
	Խաղողի գինի	հազ.լ	4.5	7.9
	Մրգային գինի	հազ.լ	42.6	31.3
Չեխիայի Հանրապետություն				
	Խաղողի գինի	հազ.լ	6.8	13.1
	Մրգային գինի	հազ.լ	3	7.2
Չինաստան				
	Խաղողի գինի	հազ.լ	0.3	3.8
	Մրգային գինի	հազ.լ	12.9	1.1
Ռուսաստանի Դաշնություն				
	Խաղողի գինի	հազ.լ	571.5	962.6
	Մրգային գինի	հազ.լ	494.9	655.7
Մյուլակիա				
	Մրգային գինի	հազ.լ	10.4	
Վրաստան				
	Խաղողի գինի	հազ.լ	11.6	20.8
Տաջիկստան				
	Խաղողի գինի	հազ.լ		1.6
Ֆրանսիա				
	Խաղողի գինի	հազ.լ	9.1	19.9
	Մրգային գինի	հազ.լ	3.9	4.8

Աղբյուրը՝ www.customs.am



Աղբյուրը՝ www.customs.am

Հայաստան ներմուծված գինու ծավալները, որոնք աճում էին վերջին տարիներին, 2012թ. կտրուկ անկում են արձանագրել՝ մոտ 35%-ով (տես գծանկար 4): Սա միգուցե կարելի բացատրել բնակչության գնողունակ պահանջարկի նվազմամբ և աճող արտագաղթով:

Հայաստանում գործող գինեգործարանները դեռևս բավական խնդիրներ ունեն: Արտադրական և որակի կառավարման համակարգերը դեռևս զիջում են միջազգային չափորոշիչները: Չնայած վերջին տարիներին ոլորտում կատարված ներդրումներին, բազմաթիվ գինեգործարաններ շարունակում են օգտագործել հնացած տեխնոլոգիաներ, որն, անշուշտ, ազդում է գինու որակի վրա:

Սույն հետազոտությամբ մենք կկենտրոնանանք խնդիրներից մեկի՝ գինեգործ-տեխնոլոգների մասնագիտական պատրաստման վրա:

Նախկինում արված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ գինեգործարանները մասնագետներ պատրաստում են սեփական ջանքերով՝ աշխատավայրում ուսուցման և ոչ այդքան հաճախակի տեղի ունեցող վերապատրաստումների միջոցով: Որոշ ձեռնարկություններ գերադասում են մասնագետներ հրավիրել արտերկրից (Ի Վի Քոնսալթինգ, 2012):

Ստորև ներկայացնում ենք հետազոտությանը մասնակցած 27 ընկերությունների տվյալները:

Աղյուսակ 2. Հարցումներին մասնակցած հայկական գինեգործական ընկերությունները:


#	Ընկերության անվանումը	Գտնվելու վայրը
1.	Ոսկեվազի գինու գործարան ՍՊԸ	գ. Ոսկեվազ, Արագածոտնի մարզ
2.	Արտաշատի գինու կոնյակի գործարան ՓԲԸ	ք. Արտաշատ, Արարատի մարզ
3.	Գոլդեն Գրեյփ Արմաս ՍՊԸ	գ. Նոր Եղեսիա, Արագածոտնի մարզ
4.	Երևանի շամպայն գինիների գործարան ԲԲԸ	ք. Երևան
5.	Գլանժ ալկո ՍՊԸ	գ. Արամուս, Կոտայքի մարզ
6.	Վեդի ալկո ՍՊԸ	գ. Գինեվետ, Արարատի մարզ
7.	Արմենիա Վայն ՍՊԸ	գ. Սասունիկ, Արագածոտնի մարզ
8.	Իջևանի գինու գործարան ՓԲԸ	ք. Իջևան, Տավուշի մարզ
9.	Շահունյան վին ՍՊԸ	գ. Շահունյան, Արարատի մարզ
10.	Գետափի գինու գործարան (Վեդի ալկո ՍՊԸ)	գ. Գետափ, Վայոց Ձորի մարզ
11.	Գետնատուն ՍՊԸ	ք. Եղեգնաձոր, Վայոց Ձորի մարզ
12.	Քիմլեյ ՍՊԸ (Արենի գյուղի գինիներ)	գ. Արենի, Վայոց Ձորի մարզ
13.	Մառան ՍՊԸ	գ. Փարաքար, Արմավիրի մարզ
14.	Մեծ Սյունիք ՓԲԸ	գ. Աղավնաձոր, Վայոց Ձորի մարզ
15.	Վայք Գրուպ ՓԲԸ	ք. Վայք, Վայոց Ձորի մարզ
16.	Սակի ընդ Սանս ՓԲԸ (Զորահ վայնս)	գ. Ռինդ, Վայոց Ձորի մարզ
17.	Արփա ալկո ՍՊԸ (Արենի գինու գործարան)	գ. Արենի, Վայոց Ձորի մարզ
18.	Գոլդ Վառ ՍՊԸ (Գինեվան գինու գործարան)	ք. Աբովյան, Կոտայքի մարզ
19.	Վան 777 ՍՊԸ	գ. Տափերական, Արարատի մարզ

20.	ՄԱՊ ՓԲԸ	գ. Լեւոնուղի, Արմավիրի մարզ
21.	Արարատի գինու գործարան ՍՊԸ	գ. Արարատ, Արարատի մարզ
22.	Ալվան ալկո ՍՊԸ (Լուկաշինի գինու գործարան)	գ. Լուկաշին, Արմավիրի մարզ
23.	Էդվազ Գրուպ ՍՊԸ (365 գինիներ)	ք. Երևան
24.	Շատո Առնո ՍՊԸ	գ. Այնթափ, Արարատի մարզ
25.	Պռոշյանի կոնյակի գործարան ՍՊԸ	ք. Երևան
26.	Մանչո գրուպ ՍՊԸ (Աստաֆյան գինու գործարան)	ք. Երևան
27.	ՍԱՐ-ԿՈՊ ՍՊԸ (Վաղարշապատի գինու գործարան)	ք. Էջմիածին, Արմավիրի մարզ

Աղբյուրը՝ ICARE


Գինեգործական ընկերությունների ընդհանուր բնութագիրը

Այդուսակից երևում է, որ գինեգործարանների մոտ 30 տոկոսը գտնվում է Վայոց Ձորի մարզում, իսկ 22 տոկոսը Արարատի մարզում (տես աղյուսակ 2): Գործարանների բաշխվածությունը ըստ մարզերի ներկայացված է ստորև բերված գծանկարում:




Աղբյուրը՝ ICARE.

Ամենատարեց գործարանը Արտաշատի գինու կոնյակի գործարանն է, որը հիմնադրվել է 1905թ., իսկ ամենաերիտասարդը Գոլդեն Գրեյսի Արմասը՝ հիմնադրված 2012թ.: Ընդհանուր առմամբ գործարաններում աշխատում է 79 գինեգործ: Գործարանների մոտ 55 տոկոսը բավարարվել է մեկ կամ երկու գինեգործով, բայց կան գործարաններ, որոնք ունեն 4 և ավելի գինեգործներ:



Աղբյուրը՝ ICARE

Մեկ գործարան ուներ նույնիսկ 12 գինեգործ (տես գծանկար 6): Բոլոր գինեգործարանների գինեգործները մասնագիտությամբ գինեգործներ են, և համարյա թե բոլորը Հայաստանի ազգային ագրարային համալսարանի (նախկինում՝ Հայկական գյուղատնտեսական ինստիտուտ, Հայկական գյուղատնտեսական ակադեմիա, Հայաստանի պետական ագրարային համալսարան) տարիների շրջանավարտներ են: Երկու գործարան ունեին գինեգործ արտերկրից (Իտալիա, Ֆրանսիա):



Աղբյուրը՝ ICARE


Գործարանների 2 ամենաբարձր վերապատրաստում/որակավորում ունեցող գինեգործների 34%-ը ավարտել է Հայկական գյուղատնտեսական ինստիտուտը մինչև 1980թ., իսկ 29%-ը ավարտել է 1980-1990թթ. ժամանակահատվածում: Այսինքն, գործող գինեգործների մոտ 63 տոկոսը ԲՈՒՀ-ն ավարտել է մինչև Խորհրդային Միության փլուզումը: Գործարանների լավագույն որակավորում ունեցող

գինեգործների 29%-ը ՌՊԱՅ-ի կամ ՅԱԱՅ-ի 2000-ականների շրջանավարտ է, ինչն ուրախալի փաստ է (տես գծանկար 7):

Գործարաններում աշխատող ամենաբարձր որակավորում ունեցող գինեգործները միջինն ունեն մոտ 23 տարվա աշխատանքային փորձ (նվազագույնը 1 տարի, առավելագույնը՝ 50): Տվյալ գործարանում ունեցած աշխատանքային փորձը միջինը 12 տարի է (նվազագույնը 2 ամիս, առավելագույնը՝ 50 տարի): Բազմաթիվ գինեգործներ կան, ովքեր ավելի քան 30 տարի աշխատում են նույն գործարանում:


2011թ. համեմատությամբ 2012թ. գինեգործարաններում նկատվել է թե հիմնական և թե սեզոնային աշխատուժի ավելացում, ինչը դրական միտում է: Եթե հավատանք գինեգործարանների ներկայացրած տվյալներին, ապա 2011թ. գինեգործարաններում աշխատել է 1288 մարդ, իսկ 2012թ.՝ 100-ով ավելի (տես գծանկար 8): 2011թ. հիմնական աշխատողների թվաքանակը կազմել է միջինը 61 հոգի (նվազագույնը 2, առավելագույնը 350, առավել հանդիպող՝ 12): 2012թ. գործարաններն ունեցել են միջինը 58 աշխատող: 2012թ. հիմնական աշխատակազմի մոտ 60%-ը երիտասարդներ էին (մինչև 35 տարեկան), իսկ սեզոնային աշխատողների մեջ երիտասարդների մասնաբաժինը կազմում էր 77%:

Գործարաններում դեռևս առկա է չօգտագործված ներուժ: Գործարանները միջինը օգտագործում են իրենց արտադրական հզորությունների 53 տոկոսը միայն: Իհարկե, կան գործարաններ (26%), որոնք օգտագործում են իրենց ողջ արտադրական հզորությունը, ընդհուպ մինչև 100 տոկոս, սակայն գործարանների կեսից ավելին օգտագործում է իր արտադրական հզորության մինչև 50 տոկոսը:



Աղբյուրը՝ ICARE


Չայաստանի գինեգործարանները, բացի խաղողի գինիներից, արտադրում են նաև մրգային գինիներ, կոնյակ և օղի: 2012թ. գինեգործարաններում թողարկված արտադրանքի մեջ խաղողի գինիները կազմել են միջինը 53% (նվազագույնը 5%, առավելագույնը՝ 100%): Գործարանների մոտ 48%-ում խաղողի գինիների մասնաբաժինը թողարկված ընդհանուր արտադրանքի մեջ եղել է ավելի քանի 70%: Միայն հինգ ընկերություններ են ամբողջովին կենտրոնացել խաղողի գինու արտադրության վրա (տես գծանկար 9):



Աղբյուրը՝ ICARE



Ստորև բերված են թողարկված արտադրանքի մասնաբաժիններն ըստ գործարանների: Գինեգործարանների մի ստվար զանգված արտադրում է ավելի շատ կոնյակ, քան գինի: Դա բացատրվում է հիմնականում կոնյակի շահութաբերության բարձր մակարդակով և արտահանման հնարավորությամբ (տես գծանկար 10):

Գծանկար 10. Թողարկված արտադրանքի մասնաբաժիններն ըստ գինեգործարանների



Աղբյուրը՝ ICARE

Գործարանների մոտ 90%-ը արտահանում է իր արտադրանքը: Միայն 3 գործարաններ դեռ չեն արտահանում: Արտահանման տեսակարար կշիռը թողարկված արտադրանքի մեջ բավականին բարձր է: Արտահանող ընկերությունների մոտ 38 տոկոսը արտահանում է իր թողարկած արտադրանքի 90 և ավելի տոկոսը: 4 գինեգործարաններ արտահանում են իրենց արտադրանքի 70-89 տոկոսը (տես գծանկարներ 11 և 12):



Աղբյուրը՝ ICARE

Գործարանների 70 տոկոսն ունի գինու համտեսի սրահ, սակայն քչերն են կանոնավոր կերպով աշխատում տուրիստական գործակալությունների հետ:

Գինեգործների մասնագիտական զարգացման կարիքները

Չետազոտության արդյունքները պարզեցին, որ վերջին 3 տարիների ընթացքում գինեգործական ընկերություններում աշխատող գինեգործների մոտ 48 տոկոսը չի մասնակցել վերապատրաստման կամ մասնագիտական զարգացման որևէ դասընթացի: Վերապատրաստման դասընթացների մասնակցած գինեգործներն էլ դժվարությամբ էին մտաբերում, թե ինչ թեմաների շրջանակում էր կազմակերպված տվյալ դասընթացը, չնայած մասնակիցների մոտ 83 տոկոսի հավաստմամբ այդ վերապատրաստման շնորհիվ գիտելիքների նշանակալի բարելավում է արձանագրվել:



Վերապատրաստումը հիմնականում տեղի է ունեցել արտերկրում, մասնավորապես՝ Իտալիայում, Ֆրանսիայում, Վրաստանում, Լեհաստանում և Չինաստանում: Ուսուցանված թեմաներից նշվեցին հետևյալները՝ ընդհանուր գինեգործություն, կիսաքաղցր գինիներ, շամպայնի արտադրություն, սննդի անվտանգություն, նոր տեխնոլոգիաներ և սարքավորումներ, մարկետինգ և տուրիզմ:

Այն գինեգործարանների մոտ 41%-ը, որոնց գինեգործները մասնակցել են վերապատրաստման դասընթացների, իրականացրել են նշանակալի բարեփոխումներ այդ դասընթացների շնորհիվ, իսկ մոտ 47%-ը կատարել է որոշակի բարեփոխումներ: Այնուամենայնիվ, դասընթացների կամ վերապատրաստումներին մասնակցած գինեգործների մոտ 78 տոկոսը համարում է, որ այդ թեմաների շրջանակում հետագա ուսուցման կարիք մեծապես զգացվում է, իսկ 17 տոկոսը համարում է, որ հետագա ուսուցման որոշակի կարիք կա:

Գինեգործարանների մոտ 58%-ը չի ստանում մասնագիտական գրականություն: Իսկ այն գործարանները, որոնք կանոնավոր կերպով մասնագիտական գրականություն են ստանում, նշել են, որ հիմնականում իրենց գինեգործներն են ստանում, այսինքն դրանք ավելի շատ անձնական մասնագիտական գրքեր են, ոչ թե գործարանի նախաձեռնությամբ ձեռք բերված: Մեկ-երկու

գործարաններ նշել են, որ օգտվում են ԳԱՀԿ-ի և կոնյակագործների միության ունեցած գրականությունից: Իսկ չօգտվողները հիմնականում նշում են ժամանակի սղության գործոնը:

Պատկերը մի փոքր այլ է մասնագիտական խորհրդատվության առումով: Գինեգործարանների 64%-ը կանոնավոր կերպով ստանում է մասնագիտական խորհրդատվություն և ամբողջովին բավարարված է ստացված խորհրդատվության որակից (տես գծանկար 13):



Աղբյուրը՝ ICARE


Մեծ մասամբ գործարաններն օգտվում են օտարերկրացի (Վրաստան, Ֆրանսիա, Իտալիա) փորձագետների մասնագիտական խորհուրդներից: Հետաքրքրական էր, որ որոշ գործարաններ մասնագիտական խորհրդատվություն են ստանում տեղացի այլ փորձառու գինեգործներից:

Հաճելի էր տեսնել, որ գործարաններում առկա է գիտելիքների փոխանցման մշակույթը: Գործարանների 87%-ը նշել է, որ վերապատրաստումից հետո վերապատրաստված գինեգործը ստացած գիտելիքները փոխանցում է ավելի կրտսեր կամ ոչ փորձառու գինեգործներին (տես գծանկար 14):

Գինեգործ-տեխնոլոգի հիմնական աշխատանքային պարտականությունների ցանկը պարզելիս ստացվեցին ընդհանրական պատասխաններ: Իրականում, կարելի է ասել, գինեգործները գործարաններում զբաղվում են «հունքի մթերումից մինչև շշալից» ընկած բոլոր հարցերով (նման պատասխան է տվել գործարանների 48 տոկոսը) կամ «գինեգործության հետ կապված ամեն ինչով» (33%): Որպես հիմնական աշխատանքային պարտականություններ նշվել են նաև «տարաների մաքրության, սարքերի նորմալ վիճակի վերահսկման կամ գինու պատրաստման ընդհանուր վերահսկման» պարտականությունները: Որպես երկրորդական պարտականություններ, որոշ գործարաններ նշել են՝ այցելություն դաշտեր, բերքի ուսումնասիրում, ճարտարագիտական հարցեր, վաճառք, շշերի մաքրության ստուգում և այլն:

Գործարանների մոտ 73%-ը բավարարված է իր գինեգործ-տեխնոլոգի կատարած աշխատանքից, իսկ մնացած 27%-ը որոշ չափով է բավարարված: Համեմատության համար նշենք, որ, օրինակ, պահածոների գործարաններում այս ցուցանիշը կազմում էր 60 տոկոս (EDMC/ICARE 2013):

Այնուհանդերձ, վերջին հինգ տարիների ընթացքում գործարանների 37 տոկոսում նկատվել է գինեգործ կադրերի հոսունություն, իսկ 63 տոկոսը չունի գինեգործ կադրերի հոսունություն:



Աղբյուրը՝ ICARE


Գործարանների մոտ 74 տոկոսն ունի լրացուցիչ գինեգործների կարիք (տես գծանկար 15): Ինչպես տեսանք, այս ձեռնարկություններում աշխատող գինեգործները մեծամասամբ միջին տարիքի անձինք են և ապագայում այս ընկերություններին անհրաժեշտ են լինելու երիտասարդ, բանիմաց կադրեր՝ սերնդափոխության նպատակով: Այստեղ արդեն ծառանում է երիտասարդներին որակյալ, ժամանակակից տեխնոլոգիական պահանջներին համապատասխան կրթություն տալու հարցը, ինչը պետք է լինի ոլորտի պատասխանատուների հսկողության տակ: Խնդիրը առավել հրատապ է մարզերում գործող ընկերությունների համար:

Բացի գինեգործ-տեխնոլոգներից, գինեգործական ընկերություններին անհրաժեշտ են նաև հետևյալ մասնագետները.

1. Լաբորատորիայի մասնագետ – 6 թափուր տեղ
2. Շուկայահանման մասնագետ – 8 թափուր տեղ
3. Մեխանիկ – 6 թափուր տեղ
4. Արտադրության պետ – 2 թափուր տեղ
5. Հաշվապահ - 3 թափուր տեղ
6. Տակառագործ – 1 թափուր տեղ
7. Ագրոնոմ – 2 թափուր տեղ
8. Մառանապետ - 1 թափուր տեղ
9. Էքսկուրսավար - 1 թափուր տեղ
10. Գործարաններում նաև նկատվում է սեզոնային բանվորական աշխատուժի պակաս:

Չնայած, որ գործարանների մեծ մասը դժգոհ չէ իրենց գինեգործների կատարած աշխատանքից, գործարանների մոտ 81 տոկոսը նշեց, որ իրենց գինեգործները անպայման ունեն վերապատրաստման և գիտելիքների պարբերական թարմացման կարիք (տես գծանկար 16):


Գծանկար 16. Արդյո՞ք կա գինեգործների վերապատրաստման կարիք



Աղբյուրը՝ ICARE

Չետազոտության միջոցով պարզվեց գինեգործների վերապատրաստման և հմտությունների զարգացման անհրաժեշտությունը՝ ըստ նպատակային հետևյալ մասնագիտական ոլորտների:

Գծանկար 17. Վերապատրաստման անհրաժեշտությունը ըստ նպատակային ոլորտների:



Աղբյուրը՝ ICARE

Գծանկարից պարզ երևում է, որ «Լաբորատորիայի հագեցվածությունը ժամանակակից սարքավորումներով և համապատասխան մասնագետներով» ոլորտը ամենաարդիականն է գործարանների համար և գործարանների մոտ 85%-ն այն կարծիքին է, որ իրենց գինեգործներին անհրաժեշտ է տվյալ թեմաներով վերապատրաստում կամ հմտությունների զարգացում: Հաջորդ կարևոր ոլորտը վերապատրաստումների համար «Թողարկվող արտադրանքի համար անհրաժեշտ սարքավորումների առկայությունը և դրանց կիրառումն» է (77%), որին հաջորդում է «Արտադրությունում կիրառվող ժամանակակից տեխնոլոգիաները» (73%-ը համարում է, որ վերապատրաստման անհրաժեշտություն կա տվյալ թեմատիկ ոլորտում) (տես գծանկար 17):

Բացի ըստ նպատակային ոլորտների վերապատրաստման անհրաժեշտության բացահայտումից, հետազոտության միջոցով պարզվեց նաև, թե գործարաններում որ ոլորտներն են առաջնային գինեգործների վերապատրաստման առումով: Ստորև բերված է ամբողջական պատկերը:

Աղյուսակ 3. Վերապատրաստման ոլորտների վարկանշումը ըստ առաջնայնության:


Վերապատրաստման / խորհրդատվության նպատակային ոլորտները	5 բալ * նշանակած ընկերությունների քանակը
Հումքի վերահսկում և ընդունում	8
Գործարանի մանրէակենսաբանական և սանիտարահիգիենիկ վիճակի վերահսկողություն	14
Թողարկվող արտադրանքի համար անհրաժեշտ սարքավորումների առկայություն և դրանց կիրառումը	12
Արտադրությունում կիրառվող ժամանակակից տեխնոլոգիաները	13
Լաբորատորիայի հագեցվածությունը ժամանակակից սարքավորումներով և համապատասխան մասնագետներով	12
Ժամանակակից օժանդակ նյութերի կիրառումը գինեգործարաններում	9
Գինեգործական արտադրանքի զգայորոշման ցուցանիշների փորձաքննություն	10

* 1= ոչ կարևոր ոլորտներ, 5= առավել առաջնային ոլորտներ:

Աղբյուրը՝ ICARE.

Աղյուսակից երևում է, որ գինեգործարաններն իրենց գինեգործ-տեխնոլոգների համար առաջնային են համարում վերապատրաստման հետևյալ ոլորտները՝ ա) Գործարանի մանրէակենսաբանական և սանիտարահիգիենիկ վիճակի վերահսկողություն, բ) Արտադրությունում կիրառվող ժամանակակից տեխնոլոգիաները, գ) Թողարկվող արտադրանքի համար անհրաժեշտ սարքավորումների առկայություն և դրանց կիրառումը:



Վերապատրաստումների իրականացման լավագույն մոտեցումը կլինի կազմել համապատասխան թեմատիկ դասընթացներ ըստ նպատակային ոլորտների առաջնայնության և վարկանիշի:



Աղբյուրը՝ ICARE

Հարցումներից պարզ դարձավ, որ վերապատրաստման նախընտրելի մեթոդների ցանկում գործարանները կարևորում են ներգործարանային խորհրդատվությունը, որին հավասարապես հաջորդում են վերապատրաստումներ լսարանային կամ աշխատավայրային ձևաչափով: Գործարանների 54 տոկոսը կարևորում է նաև խորհրդատվությունը մասնակցությունը: Միայն 19 տոկոսն է նախընտրում ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործմամբ առցանց վերապատրաստումը (տես գծանկար 18):

Ներգործարանային խորհրդատվության համար գործարանները նախընտրում են նույններից հուլիս ընկած ժամանակահատվածը՝ 5 – 10 օր տևողությամբ: Լսարանային վերապատրաստման համար գործարանները նախընտրում են մարտից օգոստոս ընկած ժամանակահատվածը՝ 3-10 օր տևողությամբ, իսկ աշխատավայրում վերապատրաստման համար գործարանների նախընտրելի ժամանակահատվածը հոկտեմբեր – մայիս հատվածն է՝ կրկին 7-10 օր տևողությամբ:




Աղբյուրը՝ ICARE

Գինեգործական ընկերությունների 64 տոկոսը դեռևս չունի որևէ միջազգային հավաստագիր սննդի անվտանգության կամ որակի կառավարման ոլորտում (տես գծանկարներ 19 և 20):

Ընդամենը 4 գործարան ունի ISO 22000, իսկ 3 գործարան ISO 9000 կամ ISO 9001 հավաստագիր: Ընկերությունները շատ են կարևորել սննդի անվտանգության չափորոշիչների, միջազգային ընդունված պահանջներին համապատասխան անվտանգության ցուցանիշներ սահմանող նորմատիվ իրավական ակտերի, Վտանգի աղբյուրների վերլուծության և կրիտիկական կետերի հսկման (HACCP) համակարգի մասին տեղեկատվության ներառումը վերապատրաստման ծրագրի մեջ:

Գծանկար 21. Գինեգործարաններում օգտագործվող բարձր տեխնոլոգիական լուծումները:



Աղբյուրը՝ ICARE

Հաշվապահական ծրագրակազմերի ներդրումը գինեգործական ընկերություններում, կարելի է ասել, արդեն կատարվել է: Ընկերությունների 85 տոկոսը ներդրել են հաշվապահական ծրագրակազմեր (ծրագրակազմեր տրամադրող հիմնական ընկերությունը՝ Հայկական ծրագրեր), իսկ մնացածը պատրաստվում է մոտ ապագայում ներդնել դրանք:

Պատրաստի արտադրանքի ստուգման մեթոդներին ծանոթ է 23 ընկերություն, որոնցից 20-ը գործարանում կիրառում է այդ մեթոդները:

Գինեգործական և խաղողագործական հետազոտությունների և զարգացման վեբ կայքերի մասին տեղյակ է 19 ընկերություն, սակայն այնտեղ տեղակայված տեղեկություններից օգտվում է միայն 15-ը: Եղանակի և շուկաների գների մասին տեղեկատվություն տվող ագրոպորտալների մասին գիտեն 14 գինեգործական ընկերություններ, սակայն այդ պորտալներից փաստացի օգտվում է 6-ը:

Ժամանակակից լաբորատոր սարքավորումների մասին տեղյակ են համարյա բոլոր ընկերությունները, սակայն ունեն միայն 8 ընկերություններ: Պատճառը, թերևս, ֆինանսների բացակայությունն է:

Հաճախորդի հետ հարաբերությունների կառավարման (CRM) ծրագրակազմերի, էլեկտրոնային վաճառքի համակարգերի մասին տեղեկացված են համեմատաբար ավելի քիչ ընկերություններ, իսկ օգտագործում են եզակի ընկերություններ (տես գծանկար 21):



Շատ գործարաններ իրենց մոտակա և հեռահար պլաններում նախատեսում են ձեռք բերել տարբեր սարքավորումներ, բարձր տեխնոլոգիական լուծումներ, ինչի իրականացման համար նրանց անհրաժեշտ է ֆինանսական և տեխնիկական աջակցություն: Գործարաններում առկա են տեխնոլոգիական վերազինման կամ լրացուցիչ ներդրումների հետևյալ կարիքները.

- գինու մշակության համար նախատեսված իոնափոխանակիչներ
- խաղողի ընդունման-վերամշակման մամլիչներ
- ջերմակայունացման ավտոմատ համակարգեր
- մեմբրանային ֆիլտրեր
- ավտոմատացված հոսքագծեր
- տակառներ
- պահամաններ
- լաբորատոր սարքեր
- շշալցման հոսքագծեր և այլն:

Ընկերությունների մի մասը իր միջոցներով քայլ առ քայլ իրականացնելու է այդ ներդրումը, իսկ որոշ ընկերություններ ակնկալում են տեխնիկական (ընկերությունների 18%-ը) և ֆինանսական (ընկերությունների 20%-ը) աջակցություն:

Գործարանների 85 տոկոսը վերջին 3 տարվա ընթացքում մասնակցել է միջազգային ցուցահանդեսների: Իսկ գործարանների 74 տոկոսը 2013թ. մասնակցել է գինու միջազգային մասնագիտացված որևէ ցուցահանդեսի: Ցուցահանդեսների մասնակցած գինեգործական ընկերությունների 83 տոկոսը 2013թ. մասնակցել է Ռուսաստանի մայրաքաղաքում անցկացվող ամենամյա ProdExpo ցուցահանդեսին: Իրենց գնահատմամբ ցուցահանդեսից ունեցած սպասումները կամ ակնկալիքները մեծամասամբ արդարացել են: Որոշ ընկերություններ մասնակցել են նաև Ֆրանսիայում (Աշխարհի լավագույն մուսկատներ), Իտալիայում (Wine Italy), Գերմանիայում (Կանաչ շաբաթ) և Ուկրաինայում կազմակերպված միջազգային ցուցահանդեսներին: Հիմնականում ընկերությունները միջազգային ցուցահանդեսներին ներկայացնում են ողջ տեսականին:

Տեղական ցուցահանդեսներից գինեգործական ընկերությունները մասնակցում են ArmProdExpo ցուցահանդեսին և կրկին ներկայացնում ամբողջ տեսականին: Ի տարբերություն միջազգային ցուցահանդեսների, տեղական ցուցահանդեսների ժամանակ կամ դրանցից հետո ընկերությունների սպասելիքները այնքան էլ չեն արդարանում:



Աղբյուրը՝ ICARE.

Գինեգործական ընկերությունների 67 տոկոսը նշել է, որ համագործակցում է այլ գործարանների հետ: Որպես գործակցության ոլորտներ նշել են տեխնիկական հարցերը, մթերման և հումքի ձեռք բերում, փորձի փոխանակում, շշալից, համտես և մասնագիտական խորհրդատվություն: Այս համագործակցությունը իրենք գնահատել են 5 բալանոց համակարգում 3.8 (միջինը), ինչը կարելի է համարել լավ արդյունք (տես գծանկար 22):

Հայաստանի ազգային ագրարային համալսարանի հետ համագործակցել է ընկերությունների 59 տոկոսը՝ այն էլ միայն ուսումնաարտադրական պրակտիկաների կազմակերպման համար: ՀԱԱՀ-ի հետ գործակցության մակարդակը իրենց կողմից գնահատվել է 4.2 (տես գծանկար 23):

Պետություն - գինեգործական ընկերություններ փոխհարաբերությունը ստացել է 3.7 գնահատական (ըստ 1 = անբարենպաստ, 5 = բարենպաստ սանդղակի): Գինեգործական ընկերությունները ոլորտի հարկային օրենսդրության մեջ ցանկանում են տեսնել որոշակի բարեփոխումներ: Հիմնական խնդիրը ակցիզային հարկի բեռն է, որը իրենք համարում են բավականին բարձր: Ընկերությունները զանգատվում են նաև վարկերի բարձր տոկոսադրույթներից: Որոշ ընկերություններ առաջարկում են հեշտացնել գինու արտահանման ընթացակարգերը: Եզակի ընկերություններ համարում են, որ պետությունը չպետք է միջամտի կամ խանգարի խաղողի մթերման գործընթացին:

Ապագա գինեգործ-տեխնոլոգներին անհրաժեշտ հմտությունները, որակները և փորձառությունը

Աղյուսակ 4-ում պատկերված են յոթ ընդհանուր կատեգորիաներում եղած 83 հմտությունների և փորձառությունների գծով 36 հարցվողների թվային արդյունքները: Յուրաքանչյուր հմտության կամ հատկանիշի առումով տրված է միջին պատասխանը և ընդհանուր վարկանիշը (83-ից): Յուրաքանչյուր կատեգորիայի համար հաշվարկվել է «բ» արժեքը (տեստերի միջոցով դիտված փաստացի նշանակալիության մակարդակ) և համեմատվել ընտրված նշանակալիության 0.05 մակարդակի հետ՝ օգտագործելով տվյալ կատեգորիայի շրջանակում յուրաքանչյուր հմտության առումով ստացված պատասխանի համեմատությունը միջին արժեքի հետ: Արդյունքների մեջ ներառվել են նաև յուրաքանչյուր պատասխանի տարբերությունը միջին արժեքից և յուրաքանչյուր հմտության ընդհանուր վարկանիշը:

Գինեգործական ընկերությունների ղեկավարները և գործող գինեգործները այս յոթ կատեգորիաները տեղակարգեցին հետևյալ ձևով (տվյալ կատեգորիայի միջին վարկանիշը հինգվետանոց սխեմայով, որտեղ 1 = ամենացածր պահանջին և 5 = ամենաբարձր պահանջին)։

(1) Հաղորդակցական հմտություններ	[4.294]
(2) Անձնային հատկանիշներ	[4.280]
(3) Գինու արտադրություն	[4.086]
(4) Խաղողագործություն	[3.641]
(5) Ընդհանուր փորձառություն բարձրագույն կրթ. ոլորտում	[3.500]
(6) Տեխնիկական հմտություններ	[3.407]
(7) Զբաղվածություն և աշխատանքային փորձ	[2.456]

Գինեգործական ընկերությունները ապագա գինեգործների հմտությունների, որակների և փորձառության փաթեթում զգալիորեն ավելի շատ են արժեքավորում հաղորդակցական հմտությունները, անձնային հատկանիշները և այնուհետև գինու արտադրության մեջ պահանջվող հմտությունների խումբը, քան՝ հարցման մեջ ներառված այլ հմտություններն ու փորձը:

Աղյուսակ 4. Գինեգործ-տեխնոլոգների մասնագիտական պատրաստվածությունը

(հմտությունների պահանջվածության ցածր մակարդակ = 1 և բարձր մակարդակ = 5)

Ա	Գինու արտադրություն	Միջին պատասխան		Տարբերութ. միջինից	p-արժեքը	Վերջնական վարկանիշը
1	Գինու գործարանի սանիտարիա	4.583	*	0.50	0.000	5
2	Խմորման արտադրություն և մանրէաբանություն	4.583	*	0.50	0.000	6
3	Խաղողի և գինու քիմիական կազմ	4.556	*	0.47	0.000	7
4	Սեղանի կարմիր գինիների պատրաստման տեխնոլոգիա	4.556	*	0.47	0.000	8
5	Գինիների արատների և հիվանդությունների բացահայտումը և դրանց կանխարգելման եղանակները	4.472	*	0.39	0.001	13
6	Յուրմի վերահսկում, ընդունում և մշակում	4.417	*	0.33	0.004	17
7	Գինեմյութերի մշակման եղանակները: Ժամանակակից օժանդակ նյութերի կիրառում	4.417	*	0.33	0.004	18
8	Սեղանի սպիտակ գինիների պատրաստման տեխնոլոգիա	4.389	*	0.30	0.008	19
9	Գինիների հնեցում մառառային մշակում	4.389	*	0.30	0.008	20
10	Գինու քիմիա	4.333	*	0.25	0.025	22
11	Գինիների դասակարգում	4.250		0.16	0.124	25
12	Տեխնոլոգիական սարքավորումներ և դրանց կիրառումը գինու գործարաններում	4.056		-0.03	0.769	35
13	Գինիների շշակից	4.000		-0.09	0.410	38
14	Գինեգործական արտադրանքի զգայորոշման ցուցանիշների փորձաքննություն համատեսի տեխնիկա	3.972		-0.11	0.278	42
15	Մրգային գինիների պատրաստման տեխնոլոգիա	3.917		-0.17	0.113	43
16	Ժամանակակից հետազոտման մեթոդների կիրառումը գինու գործարանում	3.889		-0.20	0.068	45
17	Հատուկ գինիների պատրաստման տեխնոլոգիա	3.806	*	-0.28	0.012	48
18	Գինեգործության վերաբերյալ օրենքները և իրավական ակտերը	3.528	*	-0.56	0.000	56
19	Որակի կառավարման համակարգ՝ GMP, HACCP	3.528	*	-0.56	0.000	57
20	Գինու տուրիզմ	3.111	*	-0.97	0.000	70
21	Գինու իրացման կազմակերպում	3.056	*	-1.03	0.000	71
	Միջինը տվյալ կատեգորիայում	4.086				3
Բ	Խաղողագործություն					
1	Խաղողի հասունացման փուլերը	4.194	*	0.55	0.001	28
2	Տեղական սորտերի ամպելոգրաֆիական նկարագիրը	4.194	*	0.55	0.001	29
3	Բերքահավաք	4.056	*	0.41	0.006	36
4	Խաղողի հիվանդությունները, դրանց բացահայտումը և պայքարի միջոցները	3.889		0.25	0.066	46
5	Խաղողի կենսաբանական հիմունքներ	3.722		0.08	0.516	51
6	Շրջակա միջավայրի ազդեցությունը խաղողի աճման վրա	3.611		-0.03	0.806	54
7	Միջազգային խաղողի սորտերի ամպելոգրաֆիական նկարագիրը	3.472		-0.17	0.189	61
8	Հողատարածքի ընտրության հիմնավորումը խաղողի այգի հիմնելու համար	3.361	*	-0.28	0.042	64
9	Խաղողի այգիների տնկում	3.194	*	-0.45	0.004	66
10	Խաղողի շիվերի էտում, բազմացում և մշակում	3.194	*	-0.45	0.004	67
11	Ոռոգման և պարարտացման կառավարում	3.167	*	-0.47	0.003	69
	Միջինը տվյալ կատեգորիայում	3.641				4

Գ	Տեխնիկական հմտություններ					
1	Կենսագործունեության անվտանգության հիմունքներ	4.194	*	0.79	0.000	30
2	Արտադրական և վերամշակման սարքավորումների տեխնոլոգիա	4.000	*	0.59	0.000	39
3	Պարենամթերքի վերամշակման տեխնոլոգիա	3.778	*	0.37	0.008	49
4	Համակարգչով վերահսկվող մեխան. գործընթացներ	3.667	*	0.26	0.048	52
5	Ֆիզիկայի և ջերմատեխնիկայի հիմունքներ	3.639		0.23	0.073	53
6	Կենսաբանություն, կենսատեխնոլոգիա և կենսաքիմիա	3.528		0.12	0.327	58
7	Համակարգչային օպերացիոն համակարգեր (MS office, Windows)	3.500		0.09	0.447	60
8	Սննդամթ. տեղափոխման և բաշխման համակարգեր	3.444		0.04	0.756	62
9	Համակարգչային մասնագիտական վերլուծական ծրագրակազմեր (օր.՝ Best winery)	3.333		-0.07	0.547	65
10	Մասնագիտացված բուսաբուծական արտադրության համակարգեր	3.194		-0.21	0.097	68
11	Մաթմոդելավորման հիմունքներ	2.972	*	-0.43	0.003	72
12	Ագրոբիզնեսի կառավարման հիմունքներ	2.889	*	-0.52	0.001	74
13	Հողի քիմիական կազմը և հատկանիշները	2.861	*	-0.55	0.001	75
14	Ընդհանուր բուսաբուծական արտադրության համակարգեր	2.694	*	-0.71	0.000	76
	Միջինը տվյալ կատեգորիայում	3.407				6

Դ	Հաղորդակցական հմտություններ					
1	Լսել և կատարել հրահանգներ	4.778	*	0.48	0.000	1
2	Կարողալ և հասկանալ տեխնիկական տեղեկատվություն	4.639	*	0.34	0.004	4
3	Լսել և ամփոփ ներկայացնել ծավալուն բանավոր նյութ	4.556	*	0.26	0.016	9
4	Հստակ և հակիրճ հրահանգներ տալ այլոց	4.278		-0.02	0.854	24
5	Բանավոր արտահայտել ստեղծագործական մտքեր	4.250		-0.04	0.626	26
6	Օտար լեզուների տիրապետում	4.222		-0.07	0.433	27
7	Հստակ և հակիրճ խոսել տեխ. տեղեկատվության մասին	4.167		-0.13	0.181	31
8	Հեռախոսազրույցի պրոֆեսիանալ հմտություն և վարվելակարգ	4.139		-0.16	0.111	33
9	Գրել տեխնիկական հաշվետվություններ և նամակներ	4.000	*	-0.29	0.009	40
10	Գրավոր արտահայտել ստեղծագործական մտքեր	3.917	*	-0.38	0.002	44
	Միջինը տվյալ կատեգորիայում	4.294				1

Ե	Անձնային հատկանիշներ					
1	Հավատարմություն կազմակերպությանը	4.722	*	0.44	0.001	2
2	Ինքնաշահագրգռում	4.667	*	0.39	0.002	3
3	Դրական աշխատանքային վերաբերմունք, անհատականություն, ջանադիր աշխատելու կարողություն	4.556	*	0.28	0.016	10
4	Բարոյաէթիկական բարձր չափանիշներ	4.528	*	0.25	0.027	11
5	Ջանազան պայմաններում աշխատելու կարողություն	4.500	*	0.22	0.045	12
6	Առաջնորդության և որոշումներ կայացնելու կարողություն	4.444		0.16	0.121	14
7	Աշխատել այլոց հետ և լինել թիմի մաս	4.444		0.16	0.121	15
8	Մարդկանց կառավարել և հանձնարարություններ պատվիրակել	4.361		0.08	0.428	21
9	Առանց հսկողության աշխատելու կարողություն	4.306		0.03	0.799	23
10	Ինքնավստահութ. և «հնարավորութ. օգտվելու», ինչպես և լարվածութ. (ձախողումը, մերժումը) հարթելու կարողութ.	4.167		-0.11	0.276	32
11	Հիմնախնդ. լուծման ժամ. տեխն. հմտութ. և տեղեկատվությունն օգտագործելու ընդունակություն	4.083		-0.20	0.070	34

12	Սեփ. դիրքորոշումն. և գաղափ. պաշտպանելու կարողութ	4.000	*	-0.28	0.015	41
13	ճանաչել գործարար հնարավորությունները	3.750	*	-0.53	0.000	50
14	Միջոցն. հայթայթ. նոր և եղած նախաձեռն. համար	3.389	*	-0.89	0.000	63
Միջինը տվյալ կատեգորիայում		4.280				2

Ձ.	Զբաղվածություն և աշխատանքային փորձ					
1	Գինեգործական արտադրություններում աշխ. փորձ	3.611	*	1.15	0.005	55
2	Խաղողագործության ոլորտում աշխատանքային փորձ	2.972		0.52	0.103	73
3	Սննդի վերամշակման արտադրություններում աշխատանքային փորձ	2.667		0.21	0.464	77
4	Զբաղվածություն ագրոբիզնեսի միջազգային ընկերությունում	2.389		-0.07	0.810	80
5	Զբաղվածություն ընտանեկան ագրոբիզնեսում	2.111		-0.35	0.246	81
6	Զբաղվածություն գյուղատնտ. մանրածախ բիզնեսում	2.028		-0.43	0.162	82
7	Պետական (հանրային) պաշտոններ	1.417	*	-1.04	0.008	83
Միջինը տվյալ կատեգորիայում		2.456				7

Է	Ընդհանուր փորձառություն բարձրագույն կրթության ոլորտում					
1	Տեղական ձեռնարկություններում ուսաննաարտադրական պրակտիկա	4.444	*	0.94	0.034	16
2	Ուսուննարտադրական պրակտիկա արտերկրում	4.056		0.56	0.150	37
3	Արտերկրում սովորելու փորձ	3.889		0.39	0.288	47
4	Ընդհանուր կրթվածություն մշակույթի, հումանիտար գիտութ., արվեստների և այլ ոլորտներում	3.528		0.03	0.936	59
5	Դասախոսի օգնականի կամ ոչ լրիվ դրույթով համալսարանային աշխատանքի փորձ	2.639	*	-0.86	0.046	78
6	Համալսար. արտաուսումն. աշխ., այդ թվում՝ ղեկավար դիրքեր և գործառույթներ ուսանողական ակումբներում	2.444	*	-1.06	0.023	79
Միջինը տվյալ կատեգորիայում		3.500				5

*Նշանակալի է 0.05 մակարդակում, որտեղ ստուգվում է՝ արդյո՞ք միջինացված պատասխանը էական տարբերվում է տվյալ կատեգորիայի միջին արժեքից: Տրված p-արժեքը հիմնված է կրկնակի ընտրանքի չափանիշի վրա, քանի որ միջին արժեքից շեղումը կարող է լինել թե բացասական և թե դրական:

Ամենաբարձր վարկանիշը ստացել է «Հաղորդակցական հմտություններ» կատեգորիան, որի առաջին 3 հմտությունները մեծապես կարևորել են հարցման մասնակիցները՝

1. լսել և կատարել հրահանգներ,
2. կարդալ և հասկանալ տեխնիկական տեղեկատվություն,
3. լսել և ամփոփ ներկայացնել ծավալուն բանավոր նյութ:

Այս հմտությունները նաև առաջին տասնյակի մեջ են: Ընդհանուր առմամբ, ամենաբարձր վարկանիշ ստացած հմտությունների առաջին 20-յակի մեջ հայտնվել են հետևյալները.

1. Լսել և կատարել հրահանգներ	Հաղորդակցական հմտություններ
2. Հավատարմություն կազմակերպությանը	Անձնային հատկանիշներ
3. Ինքնաշահագրգռում	Անձնային հատկանիշներ
4. Կարողալ և հասկանալ տեխնիկական տեղեկատվություն	Հաղորդակցական հմտություններ
5. Գինու գործարանի սանիտարիա	Գինու արտադրություն
6. Խնորման արտադրություն և մանրէաբանություն	Գինու արտադրություն
7. Խաղողի և գինու քիմիական կազմ	Գինու արտադրություն
8. Սեղանի կարմիր գինիների պատրաստման տեխնոլոգիա	Գինու արտադրություն
9. Լսել և ամփոփ ներկայացնել ծավալուն բանավոր նյութ	Հաղորդակցական հմտություններ
10. Դրական աշխատանքային վերաբերմունք, անհատականություն, ջանադիր աշխատելու կարողություն	Անձնային հատկանիշներ
11. Բարոյաէթիկական բարձր չափանիշներ	Անձնային հատկանիշներ
12. Ջանազան պայմաններում աշխատելու կարողություն	Անձնային հատկանիշներ
13. Գինիների արատների և հիվանդությունների բացահայտումը և դրանց կանխարգելման եղանակները	Գինու արտադրություն
14. Առաջնորդության և որոշումներ կայացնելու կարողություն	Անձնային հատկանիշներ
15. Աշխատել այլոց հետ և լինել թիմի մաս	Անձնային հատկանիշներ
16. Տեղական ձեռնարկություններում ուսամնաարտ. պրակտիկա	Ընդհանուր փորձառություն բարձրագույն կրթության ոլորտում
17. Հունքի վերահսկում, ընդունում և մշակում	Գինու արտադրություն
18. Գինենյութերի մշակման եղանակները: Ժամանակակից օժանդակ նյութերի կիրառում	Գինու արտադրություն
19. Սեղանի սպիտակ գինիների պատրաստման տեխնոլոգիա	Գինու արտադրություն
20. Գինիների հնեցում՝ մառանային մշակում	Գինու արտադրություն

Հետազոտության վերոնշյալ արդյունքները կարելի է օգտագործել Հայաստանում գինեգործություն մասնագիտության ուսումնական պլաններ մշակելու կամ գործող պլանները արդիականացնելու համար:

Բարձր վարկանիշեր ստացած հմտությունները պետք է հնարավորինս ընդգրկել որպես առարկաներ կամ առարկայի մոդուլներ և դասավանդել լսարանային կամ գործարանային պայմաններում:

Սակայն այլ հմտություններ ու հատկանիշներ էլ կան, որոնք դժվար է որպես առարկայական դասընթաց դասավանդել: Կրթական ծրագրերի պատասխանատուները ոլորտի պրոֆեսիոնալների ցանկությունների հիման վրա պետք է կազմեն նշված հատկանիշների ցանկը և այնուհետև պարզաբանեն, թե ինչպես պետք է ուսանողները զարգացնեն այդ հմտությունները: Օրինակ, թիվ մեկ վարկանիշը ստացած հատկանիշը «լսել և կատարել հրահանգները» հատկանիշն է, որը հաղորդակցական հմտությունների կատեգորիայում է: Այդ կատեգորիայի ներքո եղած հմտությունները կարելի է զարգացնել մի քանի առարկաների դասընթացների միջոցով, օրինակ՝ «Տեխնիկական գրավոր խոսք», «Բանակցությունների վարում», «Հաղորդակցություն» և այլն:

Երկրորդ տեղում է «կազմակերպության հանդեպ հավատարմությունը» հատկանիշը: Թեև սա դժվար է որպես առարկա դասավանդել, այնուամենայնիվ ուսուցողական այլ աշխատանքների միջոցով ուսանողներին պետք է տեղեկացնել այս հմտության կարևորության մասին և ստեղծել սովորելու այնպիսի միջավայր, որտեղ ուսանողները կսովորեն այդպիսի հմտությունները կամ գոնե կիմանան այդպիսի գործելակերպերի մասին: Կազմակերպության նկատմամբ հավատարմությունը այնպիսի թեմա է, որը կարելի է շեշտադրել իրական դեպքերի ուսումնասիրությունների, գործարար սկզբունքների վերաբերյալ օրինակների մեջ: Բարձր վարկանիշ ստացած հաղորդակցական

հմտությունը (լսելու և կատարելու հրահանգները) նույնպես հմտություն է, որը կարելի է շեշտադրել լսարանում, անպայման չէ՝ տեսության կամ սկզբունքների հետ միասին, այլ՝ գործնական կիրառության օրինակներով: Օրինակ, լսարանում հրահանգները կարելի է բանավոր անել՝ կարևորելով ուսանողների կողմից փորձ ձեռք բերելու, այս հմտությունն ընկալելու անհրաժեշտությունը: Բարձր վարկանշված որոշ հմտություններ, ինչպես օրինակ՝ «բարձր բարոյաէթիկական չափանիշներ», «Աշխատանքի նկատմամբ դրական վերաբերմունք/անհատականություն/շատ աշխատելու կարողություն» և այլն, կարելի է ներառել այնպիսի առարկաների ծրագրերում, ինչպիսիք են՝ բիզնես էթիկա, առաջնորդություն կամ կառավարում, ընդ որում դասախոսները պետք է օգտագործեն ուսուցման այնպիսի մեթոդներ, որոնք խրախուսում են խմբային աշխատանքը, պարտականությունների պատվիրակումը, ուսանողներին խթանելը և նրանց որոշումներ կայացնելու պրակտիկ գործընթացի մեջ ներգրավելը:

Ա կատեգորիան՝ «Գինու արտադրություն», ստացավ թիվ 3 վարկանիշը: Այս կատեգորիայում ամենաբարձր վարկանիշ ստացած 10 հմտություններն անհրաժեշտ է ընդգրկել ուսումնական պլաններում (ի դեպ, բոլորն էլ վիճակագրորեն նշանակալի են): Այս կատեգորիայում բարձր վարկանիշ, այսինքն՝ պատրաստվածության բարձր մակարդակ է պահանջում «գինու գործարանի սանիտարիա» հատկանիշը: Ուսանողները պատրաստվածության բարձր մակարդակ պետք է ունենան այս հմտությունների առումով: Այս հմտությունները կարելի է դասավանդել արդեն եղած առարկաների միջոցով կամ ներմուծելով նոր առարկաներ, օրինակ՝ «Գինու սանիտարիա», «Գինու գնահատում», «Գինեգործության ընթացակարգերի կառավարում» և այլն:

Բ կատեգորիան՝ «Խաղողագործություն», ստացավ թիվ 4 վարկանիշը: Այս կատեգորիայում ամենաբարձր վարկանիշ ստացած 3 հատկանիշներն են՝ «խաղողի հասունացման փուլերը», «տեղական սորտերի ամպելոգրաֆիական նկարագիրը» և «բերքահավաք»: Այս հատկանիշները ընդհանուր հմտությունների ցանկում բարձր դիրք չեն գրավել, սակայն պատրաստվածության բարձր մակարդակ են պահանջում, ուստի անհրաժեշտ է, որ ապագա գինեգործները Բ կատեգորիայից գոնե այս 3 ոլորտներում պատրաստվածության պատշաճ մակարդակ ապահովեն ուսման ընթացքում:

5-րդ տեղում էր «Ընդհանուր փորձը բարձրագույն կրթության ոլորտում» կատեգորիան: Այս կատեգորիայի ամենաբարձր վարկանիշ ստացած հմտությունը՝ «Տեղական ձեռնարկություններում ուսամնաարտադրական պրակտիկա», գտնվում է առաջին 20 հմտությունների ցանկում, ուստի անհրաժեշտ է ուշադրություն դարձնել դրա վրա, քանի որ գործատուները արժեքվորում են տեղական ձեռնարկություններում աշխատելու փորձը: Կրթական ծրագրերի ղեկավարները պետք է պատշաճ մակարդակով կազմակերպեն ուսանողների պրակտիկան՝ սերտորեն գործակցելով գինեգործական ընկերությունների հետ: **2 կատեգորիայի** առաջին հորիզոնականում հայտնված հատկանիշը նույնպես սրա մասին է վկայում՝ «Գինեգործական արտադրություններում աշխատանքային փորձ»: Չնայած այս հատկանիշը պատկանում է վերջին տեղում հայտնված «Զբաղվածություն և աշխատանքային փորձ» կատեգորիային, կարելի է եզրակացնել, որ գինեգործական ընկերություններն ակնկալում են որոշակի աշխատանքային փորձ գինեգործական արտադրություններում, իսկ դա կարելի է ապահովել արտադրական պրակտիկաների միջոցով:

Տեխնիկական հմտություններ կատեգորիան ստացավ թիվ 6 վարկանիշը: Այս կատեգորիայի ամենաբարձր վարկանիշ ստացած հատկանիշներն են՝ «Կենսագործունեության անվտանգության հիմունքներ», «Արտադրական և վերամշակման սարքավորումների տեխնոլոգիա», «Պարենամթերքի վերամշակման տեխնոլոգիա» և «Յամակարգչով վերահսկվող մեխանիկական գործընթացներ»: Այս հմտությունները պետք է ընդգրկվեն ուսումնական պլաններում:

Եզրակացություններ և առաջարկություններ

Վերջին մի քանի տարիների ընթացքում գինեգործության ոլորտում նկատվում է որոշակի ակտիվություն կապված ոլորտում կատարված թե ներքին, թե օտարերկրյա ներդրումների հետ: Խաղողի համախառն բերքի և մթերումների ծավալների ավելացման պարագայում գինու արտադրության քանակները դեռևս կայուն աճ չեն ապահովում: Գինեգործարանների մեծ մասը հակված է ավելի շատ կոնյակ արտադրելուն, քան գինի, քանի որ կոնյակը ավելի հեշտ է իրացնել, արտահանել և շահութաբերությունը անհամեմատ բարձր է:

Վերջին տարիներին գինու արտահանումը արագ տեմպերով աճում է, իսկ արտահանման աշխարհագրությունը ընդլայնվելու միտում ունի: Այնուհանդերձ, Հայաստանում գործող գինեգործարանները դեռևս բավականին խնդիրներ ունեն: Արտադրական և որակի կառավարման համակարգերը դեռևս զիջում են միջազգային ստանդարտներին: Չնայած վերջին տարիներին ոլորտում կատարված ներդրումներին, բազմաթիվ գինեգործարաններ շարունակում են օգտագործել հնացած տեխնոլոգիաներ, որն անշուշտ ազդում է գինու որակի վրա: Գործարաններում դեռևս առկա է չօգտագործված ներուժ: Գործարանները միջին հաշվարկով օգտագործում են իրենց արտադրական հզորությունների միայն 53 տոկոսը:

Վերջին 2 տարիների ընթացքում ոլորտում ստեղծվել են նոր աշխատատեղեր, սակայն ապագայում հրատապ է դառնալու որակյալ գինեգործ-տեխնոլոգների պատրաստման հարցը, որոնք պատրաստ կլինեն փոխարինելու գինեգործական ընկերություններում աշխատող միջին և բարձր տարիքի գինեգործներին: Գործարաններում առկա է նաև գինեգործ կադրերի հոսունություն, ինչը նշանակում է, որ գինեգործ-տեխնոլոգներին չի գոհացնում իրենց աշխատավարձը, և աշխատավարձի չնչին փոփոխության դեպքում նրանք պատրաստ են փոխել իրենց աշխատավայրը: Գործարանների մեծ մասում կա նաև լրացուցիչ գինեգործների կարիք: Բացի գինեգործներից, ընկերություններն ունեն այլ մասնագետների կարիք, օրինակ՝ լաբորատորիայի մասնագետ, մեխանիկ և այլն:

Գինեգործական ընկերությունների մեծ մասի հավաստմամբ իրենց գինեգործներն ունեն վերապատրաստման և գիտելիքները պարբերաբար թարմացնելու կարիք:

Հետազոտության միջոցով պարզվեց գինեգործների վերապատրաստման և հմտությունների զարգացման անհրաժեշտությունը ըստ նպատակային մասնագիտական ոլորտների: Ընկերությունների մեծ մասը առավել կարևորեց «Լաբորատորիայի հագեցվածությունը ժամանակակից սարքավորումներով և համապատասխան մասնագետներով», «Թողարկվող արտադրանքի համար անհրաժեշտ սարքավորումների առկայությունը և դրանց կիրառումը» և «Արտադրությունում կիրառվող ժամանակակից տեխնոլոգիաները» թեմատիկ ոլորտներում վերապատրաստման դասընթացների իրականացումը իրենց գինեգործ-տեխնոլոգների համար: Ըստ առաջնայնության, վերապատրաստման հետևյալ նպատակային ոլորտները ստացան ամենաբարձր վարկանիշային միավորները՝ ա) Գործարանի մանրէակենսաբանական և սանիտարահիգիենիկ վիճակի վերահսկողություն, բ) Արտադրությունում կիրառվող ժամանակակից տեխնոլոգիաները, գ) Թողարկվող արտադրանքի համար անհրաժեշտ սարքավորումների առկայություն և դրանց կիրառումը:

Ուստի, վերապատրաստումների իրականացման լավագույն մոտեցումը կլինի կազմել համապատասխան թեմատիկ դասընթացներ ըստ նպատակային ոլորտների առաջնայնության և վարկանիշի՝

հաշվի առնելով դասընթացների անցկացման՝ ընկերությունների համար նախընտրելի ժամանակահատվածը և տևողությունը:

Ընկերությունները շատ են կարևորել սննդի անվտանգության չափորոշիչների, միջազգային ընդունված պահանջներին համապատասխան անվտանգության ցուցանիշներ սահմանող նորմատիվ իրավական ակտերի, Վտանգի աղբյուրների վերլուծության և կրիտիկական կետերի հսկման (HACCP) համակարգի մասին տեղեկատվության ներառումը վերապատրաստման ծրագրի մեջ: Եզակի ընկերություններ ունեին միջազգային հավաստագրեր սննդի անվտանգության ոլորտում:

Գինեգործարաններում օգտագործվող բարձր տեխնոլոգիական լուծումների մակարդակը այնքան էլ գոհացուցիչ չէ: Ընկերությունների կեսից ավելին չի կիրառում ծախսերի օպտիմալացման լուծումներ, ինչը կօգներ նվազեցնելու արտադրանքի ինքնարժեքը և արտադրական կորուստները: Ընկերությունները բավարար միջոցներ չունեն, որպեսզի անցում կատարեն ժամանակակից ավտոմատ համակարգերին և ձեռք բերեն ժամանակակից լաբորատորիաներ: Ոլորտում զգացվում է թե տեխնիկական, թե ֆինանսական աջակցության կարիք:

Ապագա գինեգործ-տեխնոլոգներին անհրաժեշտ հմտությունները, փորձը և անձնային որակները բացահայտելուն ուղղված հետազոտությունը հետաքրքիր արդյունքներ տվեց: Այդ արդյունքները կարելի է օգտագործել Հայաստանում գինեգործություն մասնագիտության ուսումնական պլաններ մշակելու կամ գործող պլանները արդիականացնելու համար:

Բարձր վարկանիշեր ստացած հմտությունները պետք է հնարավորինս ընդգրկվեն որպես առարկաներ կամ առարկայական մոդուլներ և դասավանդվեն լսարանային կամ գործարանային պայմաններում: Իսկ այն հմտությունների մասին, որոնք հնարավոր չէ ընդգրկել ուսումնական պլաններում, պետք է ուղղակիորեն տեղեկացնել ուսանողներին: Դասախոսները պետք է ստեղծեն սովորելու համար նպաստավոր միջավայր՝ օգտագործելով ուսուցման այնպիսի արդիական մեթոդներ, որոնք ուսանողակենտրոն են, խրախուսում են խմբային աշխատանքը, պարտականությունների պատվիրակումը, ուսանողներին խթանելը և նրանց որոշումներ կայացնելու պրակտիկ գործընթացի մեջ ներգրավելը:

Օգտագործված գրականություն

1. Ա. Հարությունյան – Խաղողագործությունը և գինեգործությունը Հայաստանում, 2007թ
2. ՀՀ պարենային անվտանգության ապահովման հայեցակարգ
3. ՀՀ գյուղատնտեսության նախարարության հաշվետվություններ
4. Հայաստանի գինեգործության ոլորտի զնահատում, Ի-Վի Քոնսալթինգ, 2012
5. Wine Institute, 2010. Per capita wine consumption by country.
6. Litzenberg, K.K. and Schneider V.E. 1987. “Competencies and Qualities of Agricultural Economics Graduates Sought by Agribusiness Employers.” American Journal of Agricultural Economics Vol. 69, # 5.
7. www.armstat.am
8. www.customs.am
9. www.minagro.am